

ԿՐՕՆԱԿԱՆ

ԳԻՐՔ ՀԵՐՁՈՒԱԾՈՑ

Մայր-ցուցակի № 2005 ձեռագրաւմ հանդիպումենք 158 հերձուածներու կամ հերձուածողներու չարակարգութեան, իւրաքանչիւր հերձուածի համառօտ բացատրութեամբ։ Գրուածքի հեղինակը, ժամանակը, թարգմանիչը,—որովհետեւ գրուածքն երեւումէ թարգմանական,—և թարգմանութեան ժամանակը անյայտ են։ Եկեղեցու հարց երկասիրութեանց մէջ խուզարկելով այս գրուածքի նախօրինակը, մենք գտնումենք, որ սա ուղղակի կամ անուղղակի կապ պէտք է ունենայ Սրբոյն Եպիփան Կիպրացւոյ (Գ. դար) գլուխ-գործոց Panarium-ի կամ Հերձուածոց Գրքի հետ (1)։ Այդ երկասիրութեան մէջ Սուրբն Եպիփանը ն՛յատագրումէ մինչեւ Քրիս-

1) Migne; Dictionnaire de Patrologie.

տոս և Քրիստոսից յետոյ մինչև իւր ժամանակը երևեցած ուխտաւոր այլ և այլ ազանդներ, ըստ իւր հասկացողութեան և դիւրահաւանութեան, և ուղղափառ վարդապետութեամբ հերքում է նրանց։ Բայց Սրբոյն Եպիփանի Հերձուածոց Գիրքը ընդարձակ աշխատութիւն է, մինչդեռ մեր ունեցածը շատ համառօտ է և առանց հերձուածների հերքումների, որով և աւելի համապատասխանում է Սրբոյն Եպիփանի մի ուրիշ երկասիրութեանը՝ Anacéphaléose-ին, որը Panarium-ի համառօտութիւնն է,

Ս. Եպիփանի Anchorat կամ Angyrotos գրութիւնն էլ պարունակում է միևնոյն 80 ազանդների յիշատակութիւնը և նմանապէս մի համառօտ Հերձուածոց գիրք է, որը կոչւում է նաև Հաւատոց Գիրք։ Բայց ինչպէս ընթերցողը կարող է նկատել՝ մեր ունեցած Հերձուածոց գիրքը—այս վերնագիրը չը կայ ձեռագրում, այլ մեր յատկացրածն է—ոչ թէ 80, այլ 158 ազանդների պատմութիւն է, ուրեմն և ոչ միայն Եպիփանի վերոյիշեալ երկասիրութեանց քաղուածք պէտք է լինի, այլ և յաւելուածներով ընդարձակուած։ Պարզ երևում է, որ շատ ազանդների և ազանդաւորների անուններ կրկին անգամ են յիշուած, այլ և հայ թարգմանչից եղել են յաւելուածներ։ Թէ արդեօք Զարբհանալեանի յիշած «Հոլովմունք շար ազանդոց Հերձուածողաց» կամ «Բացատրութիւն բանից ուխտաւոր Հերձուածողաց»-ը նոյն այս գրուածքն է, թէ աւելի ընդարձակ թարգմանութիւն Panarium-ի՝ չենք կարող ասել [1]։ Մեր մատենադարանի մի քանի ձեռագրերում գտնուած «Արքանութիւն հերձուածողաց» կամ «Բանք հերձուածողաց» կոչուած գրութիւնները, որչափով որ մեզ յայտնի են, կամ բոլորովին տարբեր բաներ են և կամ նոյն այս մեր հրատարակածի չնչին և սխալաշատ պատառիկներ [2]։ Ինչպէս որ այս հրատարակութիւնը անում ենք միայն մի ձեռագրից, գրուած Կ. Պոլսում Փրկչական 1621 թուականին [3], պարզ և գեղեցիկ նօտր-գրով, սակայն ոսոխիկ շատ սղագրութեամբ և պատիւնեռով, որով երբեմն դժուարանում ենք ուղիղ վերծանութիւնը։ Ինագրի հետ բաղդատութիւնը անշուշտ կը սրբագրէր շատ

---

1) Հայկական թարգմանութիւնը նախնեաց· 1889 թ. Վենետիկ։

2) Եպիփանի գլխաւոր երկասիրութիւնը ծանօթ էր և Պատմահօրը, որ մի վկայութիւն է բերում այդ գրքից, տալով գրան Ցանդիմանութիւն Հերձուածոց անունը (Խորենացի Ա. 6)։

3) Թվին կենարարին ՌՈՒԽ. և ի հայոց թվին ՌՀ. գրեցաւ ի քաղաքն ի Ստամպօլ, ձեռամբ յոգնամեղ Սահակի։ Աչք ունկիք ի սմանէ աղաչեմ յիշել զանիմաստ գծողս, և աստուած ողորմի ասել, զի Թողցէ տէր զյանցանս մեր, ամէն։ Այս ձեռագրի մասին շուտով առիթ կունենանք աւելի մանրամասն դրելու։

սխալներ, աղջամուղջներ, կը պարզէր մթին և կրճատ ասացուածներ և կորոշէր գրուածքի մէջ ժամանակի ընթացքում եղած յաւելուածները, որոնցից մի քանիսը լոլորովին ակներև են։ Պարզ է, օրինակ, որ Հոմերբաբաէխտեէք-ը Hémérobaptistes-ի աղջատուածն է (խէ փոխանակ պէ՛ի), Սատուռնալացիքը Saturniliens է, Պասպիանոսք-ը պէտք է լինի Մեսալիանոսք (Messeliens) և այլն, և այլն։ Մենք ճշտութեամբ հրատարակում ենք մեր ձեռքում եղած ձեռագիրը, նրա ուսումնասիրութիւնը թողնելով մասնագէտ աստուածաբաններին։ Մեզ աւելի հետաքրքրում է այն ազդեցութիւնը, որ ունեցել են այս և սրա նման գրուածքները մեր ազգային կրօնական կեանքի վրայ։ Ձանազան հերձուածողներին վերագրուած զազրագործութիւնները, բամբասակ և անմիտ մեղադրանքները՝ Հայաստանում բարգուեցին մեծ մասամբ Թոնդրակեցիների վրայ։ Այս մասին ունինք պատմական գրաւոր անտիպ փաստեր։ Միւս կողմից հետաքրքրական են թարգմանչի գործ դրած ազգային հին աւանդական անունները՝ Երան և Ծոհմական գևերի կոչումը, որ յիշեցնում են մեզ Եղնիկ Կողբացու եղած ազանդոցի մէջ յառաջ բերուածները, Մարէ, Շնթի կանանց և Արարատցի Պօղի յիշատակութիւնները, թէև անախռնիզմներով լի, Մանիքեցիների երգմնաձևը, և այլն, և այլն։

Ընդհատ անգամ Անանիա Նարեկացու Խոստովանութեան Գրի և այս անգամ այս թարգմանական գրուածքի հրատարակութիւնը մեր այն համոզման արդիւնքն է, որ «Արարատ»-ը իւր կրօնական—պատմական բաժինը մեծ մասամբ պէտք է յատկացնէ նախնեաց կորած համարուած կամ անտիպ մնացած երկերին և նրանց հետազօտութեանը, քիչ թէ շատ ծառայելով մեր Հեռագրերի մատենագարանի հարստութիւնները երևան հանելուն և նրանց ժամանակի մաշող ժանիքներից ազատելուն։

ՄԻՒԹԱՆ.

ՀԵՐՁՈՒԱԾՈՂՔ ԵՐԵԻԵԼԻՔ ԱՅՍՁԱՓ ԵՆ ԵԻ ԱՅՍՈՐԻԿ, ՁՈՐ ԱԵՐՄԱՆԵԱՅ ՍԱՏԱՆԱՅ Ի ՄԱՐԴԻԿ։

Ա. *Բարբարիամոք, որ կոչին խուժադուժք, սկսեալ յԱգամայ մինչև ի Նոյ, զի ոչ գոյր առաջնորդ և ամենայն ոք ըստ կամայ իւրոյ գնայր։*

Բ. *Ակիւթիամոք՝ ի Նոյէ սկսեալ մինչև գաչտարակն և յԱբագաւայ սկսեալ ի կողմանս Ակիւթացւոց, որ և Թրակայ(իք) անուանեցան։ Որք զ'ինս և զՆոյս զիս պաշտեցին, ըստ իրաւունս զիւ ումեմն՝ Լրսիանդոս անուն։*

Գ. *Հելենիամոս(ք)՝ ի ժամանակացն Սերուքայ սկսեալ։ Որք*

ի ձեռն պատկերաց և նկարագրութեանցդ զանձինս սկսիցին կախարդութ պաշտեցին և աստուածատուբցին ի խեցի և ի քարի և յոսկի և յարծաթի և (ի) պղինձ և յերկաթ և զարձան ի հեթանոսութիւն։ Յետ որոյ և պատուհասաւ ի Փիլիպագորայ և յայլոց։

Դ. *Յուդայիսմանք, որ է հրէութիւն, Աբրահամէ և Յուդայէ, որ է չորրորդ՝ որ ի Յակովբայ, յորոց սկսաւ թլփատութիւն և ածեաց, որք ասեն զՅուդայ զանչիշելին անպարտս յանիրաւեն մանչանացն՝ վասն մանուածոյ ճեռանն, որ է հրէութիւն յայտնապէս։ Վասն նորա Պօղոս բարբառեցաւ ասելով. այլ բարբարիսմանք, այլ սկիւթիսմանք, և յուդայիսմանք, այլ ամենայնի Քրիստոս* [1]։

Ե. *Պիղատագորացիքն, որ է հեթանոսաց հերձուածք, որք են գնոցոգականք։ Բայց սա արգելոյր զոն յաստուածոյ՝ զինչսարս ի ճաշակելոյ, և ասէր. ի լաւոյ վեր՝ անմահ, և անոի ի խանարհ՝ մահկանացու, և ի փախուածն շինչարոյ ի մարմնոյ մինչև յանաստուն, և ՚Ե. ամ՝ լսել սայր աշակերտելոյն նորամոիթ, և յետոյ պինդն աստուածանալոյ վասն խմաստութեանն։*

Զ. *Պրաքսեացիք՝ զաստուած հիւլ և սեռակ անուանեցին, զաշխարհս ծննդական և անմահ, և աստուածային երիս մասունս ունելով՝ բանական, սրտմտական, ցանկական. և զիանայս հատարակաչ՝ սէր և կամեցող որ խառնակեցոյն, և զգիս մարդկան փոխանելիս ի մարմինս, և աստուածս բազում ի միջէ օրինապրեցին։*

Է. *Սոսիկեցիք՝ զմարմին զամենայն օրինապրեալ ասեն, և զչարն զաշխարհս զայս աստուածս անուանեն. և անոնք ի հրոյ զբնութիւն նորա ասացին լինել, և անձն բնութիւն երկրի և երկնի, և այս զլուսաւորող, և շունչ փոխանելիս։*

Ը. *Եպիկուրացիք՝ զաշխարհս ինքնեզ ասացին և ոչ յաս-*

1) Եա Կողոսացիս Գ. 11։

աստծոյ, և գոեհկաց՝ անհաւատս, և բարեպաշտութիւն՝ զանտեղն և զրմնելն, և (ոչ) նախանձաւորութեան Աստուծոյ աստցին գարմանել զարարածս, այլ բան պատասխանի 1)։

Թ· Թարմնրտիմնաք՝ որ կոչին Շամբատացիք· սոքա հեթանոսք էին ի բաբելացւոց և յաւուրս Աղմանասարայ ի պաղեստին եկեալ՝ Շամբատացիք կոչեցան, որ է պահապանք, և ընկալան զօրէնսն Մովսէսի ի ձեռն Եզրի քահանայի, և ունին գՀրէից կարգն, և խոստովանին զաստուած արարիչ գոյիցս, բայց երկիրպագանեն աստուծոյ ի Հարկէ, զի զկուռս իբրեանց բերեալ ի յերկրէն իբրեանց Թաղեղին ի Գաբեղին և ի Գեբալ, որ է ընդ Հարաւ Երուսաղէմի, և զյարութիւն ոչ ընդունին, և ոչ զայլ մարգարէից՝ բայց ի Մովսէսէ և ի գրոց նորա։

Ժ· Գոմոնացիք և Սեբեացիք՝ զոհս կատարեն հրէարէնս։

ԺԱ· Ենանացիք՝ ոչ ուժիք ընդիմանան վասն Հաւատոյ, այլ որոց որ պատահեն, ընդ նոսա ասեն։

ԺԲ· Գարիմացիք՝ զնոյն կրօնս ունին, զի ի սամարացւոցն են, բայց զշաբաթ և զմելխատութիւն պատուեն առաւել քան զՍամարացիսն, և շնչաւոր ոչինչ ճաշակեն, և ի պահս և ի կուսութիւն առաւել մարթին, այլ և առ երեսս յարութեան Հաւատան, և առանց Հանապազ լուանալոյ ոչ կոչին արժանաւորք։

ԺԳ· Դրամատիկոսք՝ որ անուանին գոլիրք, սոքա զանգութիւն ծերոցն ունին, ոչ յօրինաց՝ այլ յանձանց։ Եւ առանց լուանալոյ ոչ ուտեն, և ոչ ըմպեն, և ոչ աղօթեն։ Եւ ի հրապարակէ մնեալ՝ ոչ ննջեն առանց լուացման։

ԺԴ· Փարիսացիք՝ որ կոչին որոշեալք, կոչեն զինքեանս ընտիրս քան զամենայն մարդիկ, և պահեն երկիցս ի շաբաթու, և ամենայն Հնոյք և խորութիւնք ի նոցանէ ելանեն։

ԺԵ· Սադուկեցիք՝ որ կոչին անձնապարտ, որք էին ի Սադոկայ

---

1) Հ· «և Նախանձաւորութեան Աստուծոյ ասացին գարմանալ»։

քահանայէ և զաւենայն կարգս ըստ հրէիցն ունէին, բայց զսուրբ Հոգին, և զհրեշտակս, և զյարութիւն ոչ ընդունէին:

ԺԹ. Համերաբախախտաէք՝ որ ասին նոքա միլոտիչք. ամենայնիւ նման են հրէից, բայց ասեն՝ որ ոչ միլոտի հանապազ՝ ոչ ընդունի զկենանն յաւիտենականս:

Ի. Ովկենոսք՝ որ նման են հրէից և ընդունին զօրէնսն Մովսէսի, բայց զբազումս ի մարգարէից ոչ ընդունին:

ԻԱ. Նազօրայիք՝ որ կոչին ոչխաուորք. միս ոչ ուտեն և մինչ ի Մովսէս և յԱբրահամ՝ ընդունին զնահապետսն, և այլ ոչ ևս:

ԻԲ. Հերոդիանոսք՝ նմանք են հրէից և ի խրատուէ դիւաց Հերոդէի՝ որպէս Քրիստոսի՝ ասին ունին, և որ ինչ պատիւ է Քրիստոսի զոյն նման համարին:

— Ա յս ԻԲ. հերձուած՝ յԱդամայ մինչև ի Քրիստոս:

Ի. Սիմոնեայիքն՝ ի Սիմոնէ մոգէ էին, յաւուրս առաքելոցն, Սամարացի գոլով, որ ոչ ընդունին զ յարութիւն և զաշխարհս ոչ ասեն աստուածոյ արարած: Որ և կին մի Լուսին անուանեալ շրջեցուցանէր և իւրն անուն Աբեգակն դնէր, և յԱթէնս նկարել եւս պատկեր երկուցն ի պաշտօն, և զբահան և զպատահմունս՝ պարգևեալ յԱստուծոյ՝ ըստ աստեղային իչխանութեան գուշակէր 1), որպէս ի ծնունդս դանդաղէին Եգիպտացիքն և Քաղդէացիքն: Եւ կոչեն Շամրատացիք հայր, և հրեայքն Քրիստոս զնոյն ասեն, և Շամրատացիքն ըստ Սիմոնեացւոյ վարին, բայց զաշխարհս ի հրեշտակաց ասեն արարեալ 2):

ԻԱ. Աստաւնեղացիք՝ և ոքա ըստ Սիմոնի ազանդին վարին և ասեն անճանօթ և ճանօթ աստուած:

ԻԲ. Բասիլիդէսք՝ ի Բասիլիդեայ ուսեալք, որ աշակերտ էր

---

1) Ձ. Լուսին, Արեգակն և աստղ բառերը գաղափարագիր:

2) Ձ. «գուշակէր, Որպէս ի ծնունդս դանդաղէին Եգիպտացիքն և Քաղդէացիքն և կոչին Շամրատացիք հայր...»:

Աիմոնացւոյ, բայց· ՅԿե· երկինս ասեն և անուն գնեն նոցա Հրեշտակականս և նոյնքան առաւած ասեն ի նոսա։

ԻԿ· Նիկողոսացիք՝ ի Նիկողոսէ մոլորեցան, որ ընտրեցաւն ի սպասաւորութիւն այրեաց· որ յետս կալով ուսոյց գաղրագործութիւն իւրոց աշակերտացն, զի ունէր կին գեղեցիկ, ըստ որում նախանձէր, և ածեալ ի հրապարակ եթող զնա՝ սմա կամիցի ամուսնանալ։ Բայց ոչ նա և ոչ գաւերք իւր ընդ ումեք ամուսնացան։ Եւ զԱաւելկիայ և զՊռունիկիայ և զայլոց բարբարոսաց վարս և զկարգս եմոյծ յեկեղեցի։

ԻԼ· Գնաստիանոսք· սոքա զնորին զօշաքաղութիւն և զաղաւեղութիւնս գործեն, որ յԵգիպտոս փարաւոնացիք կոչին և ի վերին կողմանս՝ Սակոնղացիք և առ ոմանս՝ Զաքէացիք։ Եւ ոմանք՝ կոդէանոսք, և ոմանք՝ Բորբորացիք։ Եւ սոքա ամենեքեան ի Բաբելոն պարծին։

ԻԽ· Կարպոկրատիանոսք՝ որք ի Կարպոկրատէ ասիացոյ ազանգոյն, որ ուսոյց զամենայն աղաւեղութիւնս անխտիր գործել և ասաց՝ որ ոչ կատարէ զկամն դիւացն ոչ կարէ ի վերին երկինս անցանել։ Եւ ասաց՝ թէ Յիսուս շունչ իմանալի ընկալաւ և ապա գիտաց զվերինն պատմել և թէ ոք զբանն Քրիստոսի պահէ՝ հաւասար նմա լինելոց է, և զյարութիւն ոչ ընդունի և պատկերս Յիսուսի սարթեալ, և պօղոս նոցա 1) և Հոմերոնէս ի ծածուկ՝ որոց խաւնին ծխէր և երկիրպագանէր ի Հռոմ։

ԻՉ· Կերինթիանոսք և Մերինթիանոսք, որք են Հրէայք, և պարծին ի թլփատութիւն, և զաշխարհս ի հրեշտակաց առացին լինել, և զՅիսուս յառաջապիմութեամբ ասեն առաւածացեալ։

ԻԾ· Աբիանացիք՝ նման կերինթացւոյն ասեն, և Սամոսատացիքն նմանեալ կեսացւոյն են՝ որք ասեն զՅիսուս Քրիս-

---

1) Ձ· «Պղօսնց»։

տաս տասեղծե(ա)լ (ղ)երկինս [1]) *և գՀոգին տալր, և զգեցեալ միայն տանն զմարմինն Ադամայ Քրիստոսի և ոչ միաւորեալ ընդ անարատ աստուածութիւնն, և գարձեալ մերկանալ և զգենուլ ի գալստեանն, և զմարս Հրէից ընդունին* [2]*, և զաւետարանն և զառաքեալսն ընդունին, բայց զառանց միայնոյ թուղթն ոչ ընդունին, և տանն զնա մարդկային մտօք ստացեալ, և ոչ խոստովանին ի նմա բնակեալ զՔրիստոս: Ի մոռ գարշին և զՂուր որպէս գաստուած պատուեն:*

ԻԸ· *Վասէնտիանոսք՝ զօրէնսն Մովսէսի և զյարութիւն ոչ ընդունին, այլ սակաւ բանս, որ իւրեանց առաքելոցն պատշաճի՝ ընդունին: Ի· յաւիտեանց* [3]*) անուանս տանեն՝ արուսեայ և իգայ, և զամենեսեան զնոսա ի միերին Հօրէն ծնեալ տանեն, և աստուածս անուանեն զյաւիտեանս: Եւ ունին գիրք մի՝ զՍիմոն կախարդի, որում Պրակս Առաքելոյն կոչեն, և զՔրիստոսէ տանեն թէ մարմին յերկինս զգեցաւ և որպէս ընդ խաղալիկ ինչ ընդ կոյան անցաւ և այնչ առ ի նմանէն:*

ԻԹ· *Անկուղգացիք զվասէնտիանոսեան զպղծութիւնն մարին, բայց զերկաթ առաւել պատուեն:*

Լ· *Պաղումացիք զվասէնտին ունին, և զձայնս Հաւատոյն Հմայեն և ս:*

ԼԱ· *Մարկիանացիքն· Մարկիոնս այս վախտակից Լր: Հաղարբոս· Բ· սկզբունս ասէ, և յարութիւն ոչ ընդունին և ·ԻՀ· յաւիտեանս ասէ:*

ԼԲ· *Կողարբիանոսք զՄարկիոնին ունին, բայց ·Ը· յաւիտեանս աւելի տանեն:*

ԼԳ· *Հերակլիանոսք՝ որ զնոյն ·Ը· առաքելոցանեն, և զՄարկիոնին և զվասէնտին(ին) և զայլ բազում Հերձուածս: Եւ լուանան ապրատ ազով և ջրով:*

---

1) 2· *երկինք բառը գաղափարագիր:*
2) *Ըստ մեզ պէտք է կարդալ՝ ունին:*
3)=30 *յաւիտեանց:*

ԼԴ· Ա՛ֆիխեանք՝ որ են օձախաղացք, որք զօձս վտառաւրեն որպէս զԲրիաոս, և ունին բազում օձս ընդ ինքեանս ի սապատս՝ ի պաշտօնս իւրեանց։

ԼԵ· Կապիանոք՝ զօրէնան Մոխոխ բամբասեն և որ նմա ետ զօրէնան, և զոչ ինազանցան պատուէնն, և զկայէն վտառաւրեն, բանաւոր զօրութիւն ունել ասեն նմա, և զՅուդայ մանանիչ՝ չառաւաճոյն անուանեն, և զկորխ և զԴաթան և զԱզոմայիս։

ԼԶ· Ա՛ղբունիսէք՝ որ ասին իշխանականք. սոքա բազում իշխանութիւնս խոստովանին արարածոյ և ի պիղծ ոճս իւրեանց գալշելի իրայ Հայոցդին, որ զպղծալի է ասելն՝ զսպասիարն կանանց։ Եւ զՀին ի՛սակարանս ուրանան՝ և զյարութիւն։

ԼԷ· Կերպիանոք՝ ի կերպինոսէ ընկալեալ զանուան(ա)կոչութիւնն, որ յԱսորոց մինչև ի Հռոմ ձգեալ զազանգն իւր։ Ը· սկզբունք քարոզեալ Հակառակս, և զԲրիաոս արարած ասացեալ, և զյարութիւն ոչ ընդունին, և մահամբ ինչ վարի օրինօք։

ԼԸ· Անթիանոք. սոքա զԱՀթ վտառաւրեն և ասեն զնա ի վերին մօրէն ծնեալ, զի յետ սպանմանն Աբէլի ոչ ասեն Ադամայ տնուանանալ ընդ Եւային, այլ ի յերկնային մօրէն ասեն ասացեալ զԱՀթ, որ ինձանէ կարգի ազգ մարդկան։ Եւ ունիք ի նայանէ Պարկեշտագոյնք անուանին. ծառ կենաց զՊառաՀայ մայրն անուանեն՝ խոստովանել և ամենանանալ 1) ի դրախտին, զոր և յանցուցմն կոչեն։

ԼԹ· Մարկիանոք. Մարկիանոսս այս Պոնտացի էր՝ եպիսկոպոսի որդի, որ ապականեալ զկոյս և վախեալ ի Հռոմ, զի Հայրն եՀան զնա յեկեղեցւոյն։ Եւ սա խնդրեալ ապաշխարութիւն և ոչ գտաւ. դարձաւ և եղև Հակառակ եկեղեցւոյ և ասաց Ը· սկզբունս՝ բարի և չար։ Եւ զնոր կատա-

1) 2. խոստովանել և ամենանալ։

կարանա օտար ասէ յօրինայ և զ յարութիւն ուրանայ: Եւ որչափ մեղանչէ՝ մկրտիլ պարտ է ասէ, և թէ որ երախայ մեռանի՝ զայլ որ մկրտել յանուն նորա, այլ և կանանց հրամայէ մկրտութիւն առնել:

Խ. *Ղուկիանոսք. սոքա լսող Մարկիանի աղանդին վարին՝ և աւելի:*

ԽԱ. *Ապելիանոսք. սոքա լսող Մարկիանի չարագործեալ, բայց զսկիզբն մին ասեն, զի մինն աստուած ասեն, և նա արար այլ աստուածս, և արար աստուած մի, որ չար գտաւ, և նա արար զաշխարհս:*

ԽԲ. *Անէրիանոսք. սա զգինի խոտէ և զորթ՝ ասէ, ի միշապէ բնութենէ արեան կաթիլ, և երկիր բուսոյց զնա: Եւ զկինն ի բաց մերժէ, և ասէ թէ դատակոդմանն գաւառ է, այսինքն՝ դիւաց: Եւ ընդ արուս խառնակին անխտիր, և գիրս ունին ի ծածուկ, որ զհին և զնոր կտակարանս անարգէ:*

ԽԳ. *Տատիանոսք. սա աննդակից էր Յուստինոսի մարտիրոսի և զհետ կատարման նորա անկաւ յաղանդն Մարկիոնի:*

ԽԴ. *Եակրիանոսք՝ որ կոչին ժուժիալա. սոքա ի Տատի(ա)նոսէ հերձուածոյն են, և զամուսնութիւն խոտեն, և շնչաւոր ինչ ոչ ուտեն, և խաշն և արջառ՝ որձ և էգ ունին: Եւ զմարմնական կիրս Աստուծոյ բանին ոչ ընդունին, և մանաւանդ զերկիւղն, և զքրտունսն, և զպարտականն առակ աստուածութեանն տան, և ոչ միաւորեալ անօրէնութեանն, և են սոքա աստուածատարտարք: Յայսմ աղանդոյ են և Ապողինարիոքն կոչեցեալ:*

ԽԵ. *Մոնտանոցիք և փռիւգացիք. սոքա զնոր և զհին օրէնսն ընդունին, բայց զմարգարէսն ոչ ընդունին և ի Մոնտանոս պարծին և ի Պրիսկիլլեայ:*

ԽԶ. *Պեփուզացիք. Պեպուզիա[1]) գեղ է ի Գալատացւոյ աշխարհին և նոքա կոչեն զնա աստուածային երուսաղէմ[2]), և քահա-*

---

1) 2. *Յ ե ե մ:*

2) Թերևս պետք է կարդալ՝ *Պ ե պ ո ւ զ ա ց ի ք* և *Պ ե պ ո ւ զ ի ա:*

նայս գիանայս կացուցանեն: Բակաձև նստուցանեն զգլխաւոր կանայն և մանուկ տղայ խոյտաեն՝ ձգելով ի միմեանս, և առ ոմ մեռանի՝ նա է նոյա քահանայ: Եւ յարենէ մանկանն հայ արարեալ տան ի հաղորդութիւն պատարագայ և զսակերան թաղեն՝ կամ ի բարձր տաճարի՝ առ երդս, կամ ի բարձր լերինս: Եւ յորժամ խօսին ընդ ումեք կամ երդնուն՝ գձեռս ամբարձեալ ասեն. Միածինն, Բարձրեալն, որ ի վեր է քան զամենայն: Եւ առեն՝ Տիտղէ կամ Պրիակիլեայ յղացեալ Ծնաւ (զ)Քրիստոս ի Պեղուզայ: Եւ զնա իգական կերպարանս առասպելաբանեն: Ընդին գՀին և զնոր կուսակարանս՝ ըստ իւրեանց կամացն փոխաձևեալ:

խէ. Ջորեքտասանականք. սոքա ի տարւոջն ՚Ա. օր զատիկ կատարեն՝ լուսնի ՚ԺԴ-ն գինչ և պատահէ օրն, և զյորեքշաբաթին չորեքտասան կոչեն: Երկրորդ զատիկ և զանաժան օրինան թողուն մինչև այլ նոյն գիպեաղի: Իսկ մերս՝ ըստ առաքելական կանոնին՝ եթէ ոչ ջերմն եկեալ ի սեղանն և նոյն ժամայն ծախեացի՝ ոչ է ընդունելի: Բայց ի Նիկիոյ ժողովն կանոնեցին յ. Ս. Գրագալուշան մանն ինչ թողուլ Հիւանդաց և տղայոց և այլոց ևս:

խԸ. Աղջինոսք, զորս անբանս կոչեմք: Սոքա գՅովհաննու աւետարանն և գՅայտնութիւնն ոչ ընդունին:

խթ. Ադամիանոսք. սոքա զԱդամ կենդանի ասեն, և արք և կանայք մերկ ժողովին յեկեղեցին: Եւ զհաւատացեալ աւազակին՝ ասեն թէ՝ Ադամ էր, և զեկեղեցին կոչեն՝ գրախտ, և գինջեանս՝ աբեղայս և կուսանս, և առ երեսս զամուսնութիւն ոչ ընդունին:

ի. Ասմենաւիք. սոքա որ են առաջին նկլեսայիք սուրբ (ք)[1], բնակեալ յԱրարիոյ՝ ընդդէմ Մեռեալ Ծովուն և են խաբեալք[2] յեղբմայէ սուտ մարգարէէ: Եւ զԱրարիոյ և

---

1) Ձ. «Նկլեսացիք սբ. բնակեալ...»:

2) Ձ. «խարէք յեղբմայէ ...»:

զմարթայ կանայք առաջնորդ իւրեանց ազանդոյն առաւել կարծեն և ի գոգ նոցա երկրպագեն 1) դշանկութիւն պաշտելով, ըստ որում և խրոնացիքն։

ԾԱ. Թէոդիանոսք. սոքա ի Թէոդոսէ սկիւթացւոյ խաբեցան, որ կայր ի Բիւզանդիոյ, երևելի ուսմանն Հեթանոսութեան, և ընդ քրիստոնեայս ըմբռնեցաւ ի հալածմանն և յորժամ նոքա կատարեցան՝ երկուցեալ ի տանջանացն, սուկ մարդ առաջ զԲրիստոս ըստ կամաց թագաւորին։

ԾԲ. Մելքիսեդեկացիք. սոքա զՄելքիսեդեկ ոմն ածեր պատուեն՝ Աքակուման Ջօրութիւն կոչելով, և ոչ մարդ լոկ, այլ ի վեր քան զմարդ, և յանուանս այս ածել Համարձակին զամենայն մարդիկ։

ԾԳ. Բարդեծանեցիք. Բարդեծան այս ի Միջագետս էր ուղիղ վարուք և յետոյ փոխեցաւ ի Վաղէնտիանոսի հերձուածն։

ԾԴ. Ղեստիանոսք. սա էր ի Սեմիններայ ասիացւոյ և կատաք շրջէր, և զԲրիստոս ասէր՝ Հայր և որդի (և) Հոգի սուրբ, և ասէր զինքն Մովսէս և զեղբայրն իւր՝ Ահարոն։

ԾԵ. Վաղէնտիանոսք. սա ի Բակեթոն բնակէր, որ է Աքրաբիայ։ Խոստովանին զԲրիստոս մարդ սուկ և առաքինութեամբ աստուածացեալ և յաստիճան որդւոյ աստուծոյ փոխեալ, ոչինչ առաւել քան զՅովսէ[2]), զի և նոցա կոչեցաւ որդի։ Եւ չարաչար իմանալով զգիրս՝ Հաստատեն զանգամս իւրեանց ի գրոց, և զօշաքարտութիւնն առանց պատժոյ Համարին։ Նոցա պարկեշտագոյնքն ամենայն կուրծս են, զի ախտից ոչ կարեն յաղթել։

ԾԶ. Կաթարիանոսք, որ կոչին սուրբք. սոքա զՆաւատեանոսացւոց հերձուածն ունին։ Ջապաշխարութիւն ոչ ընդունին և զերկրորդ ամուսնութիւն խոտեն։

ԾԷ. Անկելիէ, որ թարգմանին՝ Հրեշտակականք։ Սոքա պար-

---

1) Ձ. «երկրպագիցեն»։

2) Ձ. զԷլ։

ծին հրեշտակական ունելով զիարս և զհրեշտակս փառաւորել։

ԺԸ. *Ապոստոլիկէ, որ կոչին Առաքելականք։ Սոքա ի կոչմանցն իսկզիեայեն և ապօթս ընկերօք ոչ ընդունին, այլ առանձինն, և այլաբանութեամբ աւելի քան զարժանն խմանան։*

ԺԹ. *Բեղխանոսք, սոքա զարշարանս միածնին Տեր և Տոգւոյն դնեն ոչ հաճութեամբ՝ այլ բնութեամբ։*

Կ. *Որ(ո)դինացիք, սոքա յՈրոգինէ ումիմնէ զազգագործէ խաբեալք՝ զմարմինս ապականեն երևելով իբրև զպաշտօն։*

ԿԱ. *Միւս Որոգենոսկիք, այս Որոգինէս ոգամանգ կոչեցաւ, ըստ առաջագոյն հնչակեալ խնամոտութեանն և մոքրութեանն համագիր, և յետոյ ուրացեալ զյարութիւն մեռելոյ՝ և զիրիտոս առեղծուած ասաց, և զսուրբ Տոգին դրախտ և յերկինս։*

ԿԲ. *Պօղխանոսք. Պօղխանոս(ս) այս էր Սամոսատացի։ Սա նախ անուանէր զԲրիտոս անսկիզբն, իսկ յետոյ ի Մարիամայ ասաց սկսեալ և յառաջադիմութեամբ հաճոյացեալ աստուծոյ։ Եւ երկրորդ գալուստ զի կուսէն 1) երևումն ասաց, և որ յառաջ ասացաւ զնմանէ ի մարգարէիցն, ասաց, չէ ասոյգ. և թէ՝ որ ասաց Աբրահամ մարդ և իմացաւ և խառնակեցաւ զնովա զիբրահան խորհուրդն յայտնեաց, ասէ, և ոչ առ անձնաւորութիւն։ Եւ սոքա վասն մեռելոյ պատարագս ոչ ընդունին և ոչ կատարեն, զի ապականացու և Տողեղէն բնութեանս նորագութիւն ոչ խոստովանին։ Եւ յարութիւն զաճուս ասեն և յանուն աստուծոյ պատարագ մատուցանեն, և որ յանուն լուսաւորացդ և թէ՝ Տօն կոչեալ դիւ։ 2) Սոքա զբարեխօսութիւն սրբոցն ոչ ընկալան և ոչ զԲրիտոս յարուցեալ ի մեռելոց, և պահեն զշաբաթս սուրբ քառասնորդացն և ծոմանան ի շաբաթս և ի կիրակէ։ Նմանապէս սոքա ի խորհուրդն ջուր խառնեն և երդնուն յարեգակն։*

---

1) Ձ. «զի կուսէն»։
2) Թերևս՝ Թէ տօն կոչեալ դիւ։

կԲ. Մանիքեցիք. սոքա Մանեայ պարսկի աշակերտք էին և պաշտեն զարեգական և զլուսին և զաստեղսն։ Եւ երկնուն յարեգական և ասեն՝ Լուսիկ արևիկ քաղցրիկ, լի՛ ես ութեղերօք։ Զի Քրիստոս զարեգական խոստովանին և դիւաց երկրպագեն և զՔրիստոս կուսիւ երևեալ և խաչեալ ոչ ընդունին։ Բ. իշխանութիւն ասեն՝ չար և բարի, և զհին կտակն հոյհոյեն։

կԳ. Յերակացիք՝ որ Յերակայի քաղաքէ եգիպտացւոց Վևռոսէ, որ հին և նոր կտակարանօք վարին և մեռմնոյ յարութիւն ոչ ընդունին և յամենանութենէ հրաժարին իբրև զճգնաւորս։ Բայց ճգնաւորն այն է, որ գինս տան և խառնակին և զաղջկունս, որ ի չափ հասեալ են՝ այրիս անուանեն։

կԴ. Մելետիանոսք. սա նախ աշակերտ էր Պետրոսի եպիսկոպոսին ալէքսանդրացւոյ և ապա՝ խոտորեալ ի հալածանացն՝ ընդ Արիոսի միաբանեալ։

կԵ. Արիանոսք. սա զորդին առաւՀոյ արարած ասաց և զառ բր Հոգին՝ ասեղծուած։ Եւ զմարմին միայն, ասաց, փրկին (ի) Մարիամայ առեալ և զշունչ, և զաստուածն անգամն ասորև՝ ոչ։ Եւ սա էր երէց Ալէքսանդրի[1]) և վաղէսի ամբարիշտ թագաւորի վարդապետ։

կԶ. Աղբիանոսք. սոքա վարուք լսոյ կամաւորիկ եկեղեցւոյ վարին, բայց ի վանս ուրեք ոչ գնային։ Ուտին և կարգս ինչ ի ծածուկ զօշաբարեաց և ընդ մեզ ոչ ապրեին։ Եւ պատուեն զօգս և զպատուղս, և յորժամ՝ ի մի վայր ժողովին ի խորհուրդս՝ զաստուած ոչ յիշեն, այլ զնոսա՝ և զտանկանս, և զիւր ուժեմն զոհ մատուցանեն՝ երան և Տանկանն կոչեցեալ անուն։ Եւ զաւիկ ընդ հրէայս կատարեն, և զաժենայն բարերար իբրեանց՝ յանատնոյ և ի գազանաց պաշտեն։ Եւ զեպիսկոպոսունս և զքահանայս մեր բամբասեն վասն ընչասիրութեան։

---

1) Այսինքն է՝ Ալեքսանդրիոյ։

ԿԸ. Փոսիանոսք. Փոսինոս այս ի Սերբայ էր, որ ի սերմանէ ասայ ծնեալ զաստուածՙ բանն ի Մարիամայ ըստ Պօղեայ առնօրէնութեանն, զմարմին տեառն ապականացու, և այսահար զառաքեալն, [1]) որում ոչ գոյ թողութիւն:

ԿԹ. Մարկեղանոսք. Մարկեղոս այս Անկիւրեայ Գաղատիոյ էր և յանդիմանեալ ոչ եկն յապաշխարութիւն, քանզի յառաջ Սաբելեան էր, այլ և աշակերտք նորա ի նմին կային: Սոքա զմարմին Տեառն յարեգական ասեն եղեալ:

Հ. Հոմերիանոսք, որ ասին՝ կէսք յարիանոսացն: Սոքա ըզՓրիստոս յինքենէ ասեն ստեղծեալ, և որդի անուանեն զնա ոմն մերձենալոյ չարչարանացն նորա ի Հայր, յորմէ արգելօք համարելի է կալեալ վճարումն, կամ որ բաւականութեամբ կայր, կամ խնամոյին բոլորեցուն աչօք աստուածոյ, զի նմա և եթ է ձեռնհասութիւն: Եւ յեղակարծումն և առանց միջոցի զարմանալիս երևեց (ուրա)նէր, որ մշտնջենաւորեալ էր [2]) յաւազանէն վայելչութենէ, և ընդ եղկելին պարարկեալ տարակուսութեամբ շնորհեալ միխիթարութիւն ապաստանութեան:

ՀԱ. Պենէմնաստոսք՝ Բարիոք ասին [3]), բայց զՀոգին Հայհոյեն, և ոչ ասեն զնա յաստուածութենէն անապատ բղխումն, այլ ըստ շնորհայ յաջողութեան ստեղծեալ սրբաւորական [4]) զօրութիւն:

ՀԲ. Միւս Արիանոսք. սա Պոնտացի էր, երէց Սոսթէ եպիսկոպոսի և ընդ Արիանոսք կամակից եղեալ: Եւ զի ոչ ոք կացոյց զնա եպիսկոպոս՝ բազում ինչ հակառակ եկեղեցւոյ կարգեաց: Ոչ է պարտ, ասէ, ոման մեռելոց պատարագ առնել, և ոչ պահել զուրբաթի և զչորեքշաբաթի: Եւ զսուրբ

---

1) Ձ. զ ա ռ ք լ ն. պէտք է կարդալ զ ա ռ ա ք ե ա լ ն, թերևս և՝ զ ա ռ ա ք ե ա լ ս ն:

2) Ձ. մ շ տ ն ջ ն, ր լ է ր.

3) Ձ. « Ասեն ».

4) Ձ. ս ր բ ւ ր կ ն.

քառասներորդն և զգաստին արգելոյր ի կատարելոյ· զմիս անխտիր հաջէ [1]) ուտել յամենայն աւուր, և ի փախուստիւնս հեշտանալ: Պահք այն է, ասէ, զի իւր կամօք ոք պահիցէ, և ոչինչ կարգաւորել աւուրս, և զի՝ չեմք ընդ օրինօք, այլ ընդ շնորհօք, և՝ ոչինչ աւելի է եպիսկոպոս քան զերէց:

ՀԳ· Աէտիանոսք, որ յԱէտս [2]) կիլիկեցւոյ՝ եղեալ սարկաւագ ի Գէորգայ եպիսկոպոսէ և խոտորեալ յաղանդն Արիանոսայ: Սոքա զերեքշաբթի խաւսն և ի նմա ասեն եղեալ զչար:

ՀԴ· Եւնոմիանոսք· սոքա յԱէտիանոսէ և ի նորին աշակերտէ մոլորեալ՝ օտար ասեն զՔրիստոս և զՀոգին յաստուածութենէն: Ասեն աստուած՝ այլ փոքրագոյն, զի ոչ ասէ Հաւասարի [3]) Հօր յէութեանն: Եւ որ յայլոյ հերձուածոյ գան առ նոսա՝ դարձեալ մկրտեն, և որ յԱրիանոսայն գառնան առ նոսա՝ գլխիվայր մկրտեն: Եւ զարուամոլութիւն, և զպոռնկութիւն, և զայլ մեղս ոչինչ համարին, զի Հաւատս միայն խնդրէ աստուած՝ ասեն:

ՀԵ· Դեմիւրիտք, որ ասին Ապօղինարիտք, որք ասեն՝ Հոգի և միտք ոչ էառ Տէրն:

ՀԶ· Անդիտիքս Մարիամիգէ, որ կոչին՝ Դիմամարտք Մարիամու, զի ասեն թէ յետ ծննանելոյն զՔրիստոս ամուսնացաւ ընդ Յովսէփայ:

ՀԷ· Մարիամիտք· Սոքա յամի միանգամ կարգեալ են խորտիկս ինչ մատուցանել յանուն նորա, որոյ անուն եդաք՝ խորտկարարս:

ՀԸ· Պասալիանոսք, որ ասին Ապօթականք: Մերձաւորք են սոքա ամենայն հերձուածոցայ հեթանոսաց:

ՀԹ· Արտեմոնացիք· եղծանէր զամենայն գիրս և նորս գրէր:

Զ· Սիմոն և Կղէոպբոս՝ ոչ ընդունին զմարգարէական գիրս,

---

1) Ե. յսպէս Զ. ուր՝ այսինքն՝ հաջուր է (շան պէս) = հրամայուր է, Թերևս կարելի է կարդալ և՝ հաճէ, այն է՝ հաճութիւն է տալիս:

2) Զ. «յաւէտ»·

3) Զ. «հաւասար ի հօր···»

և ոչ ասեն զաստուած արարիչ և ամենակալ, այլ ի հրեշտակաց զոմն, և ոչ խոստովանին զաստուած բանն ծնեալ ի Մարիամայ: Սոքա առ Պօղոսիւ էին:

ՁԱ. *Աւեգիոս* 1). *Սա ասէ թէ աստուած՝ որ ստեղծ զմարդն, անձն և պատկերս զմերս ունի, և թլփատութիւն առաչօք ասեն և ոչ ճշմարտութեամբ:*

ՁԲ. *Միւս Սեթիանոսք, որ պատուեն զօձս և ասեն, թէ բարի խորհեցաւ ուստն մեր, և աստուած նախանձեցաւ ընդ մեր բարին և անէծ դնաւ ուստն որոյ պաշտեն զօձն:*

ՁԳ. *Կասիանոսք, որ զմաշկէ պատմուճանն՝ զմարմինս ասեն:*

ՁԴ. *Սամսիոք, որ զարեգակն պաշտեն և ջրոյ սպաս տանին և այլ բաղում՝ սուտ աւանդս ունին:*

ՁԵ. *Պռոսէքիսոք, որք ասեն՝ հաւատովք և բարի գործովք հնար է յարքայութիւնն գնալ, առանց մկրտութեան:*

ՁԶ. *Վաղէնտիանոսք՝ ·Բ· արարիչ ասեն՝ բարոյ և չարի· զհին գիրսն չարին ասէ և դնորս՝ բարոյն, և յանդնդոց և ի լռութենէ գոյացեալ զաշխարհս:*

ՁԷ. *Այլ Վաղէնտիանոսք· ·Բ· որդիս ասէ՝ զմինն բնութեամբ և զմիւս(ն) շնորհօք, և զմարմինն յերկնից ասէ բերեալ:*

ՁԸ. *Միւս Ապեմանն՝ շունն, սոսկ մարդ ասէ զՔրիստոս և պչարչարանսն՝ սոսկ մարդոյ, և ոչ աստուածախառն մարմնոյն, որ անբաժանելի միաւորեցաւ ընդ անապակ 2) աստուածութեանն: Եւ ուստն այսորիկ ուրացաւ զփրկական ձայնն ի սրբասացութեանն՝ պատճառանօք երրորդութեանն: Վասնորոյ անխափ օրինագրեաց ճաշակել զսուրբ խորհուրդն և ոչ սրբութեամբ, զի ոչ աստուածոյ՝ այլ սոսկ մարդոյ մարմնացելոյ:*

ՁԹ. *Փանէա՝ ասաց ուստն Հոգւոյ մարդկան, թէ յերկինս էին և յերկիր անկան, ուստն զի մեղս արարին:*

---

1) Կարծեմ ուղղագոյն՝ Աւեգիոս = Audius·

2· «անապատ»· Այս երկու բառերի շփոթ ընթերցուած ունի և Խորենացին· «իսկ երթանելին Նուռնէ եւ գնաց աշակերտել զայլ ևս գաւառսն Վրաց յանապակ լեզուէն (Բ· 86) Սանահնի ներսես գրչի օրինակը՝ յանապատ·

Ղ· Ասաերոս՝ զդրախտն իմանալի ասաց, և ոչ զգալի, և ոչ շօշափելի:

ՂԱ· Աքիոնացիք՝ զառաքելոյն Պօղոսի զհուպիան ոչ ընդունին և կոչեն զնոսա օրէնս խառնական, բայց զշաբաթ և զայլ խորհուրդսն հրէական ունին:

ՂԲ· Կերդոն անօրէն՝ ասաց, թէ աստուած որ յաւիտենից քարոզեցաւ ոչ է Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի սա յայտնի է, ասէ, իսկ նա ոչ է յայտնի: Եւ ի վկրտելն՝ ասէ, յանուն Հօր ամենայնի որ ոչն ճանաչի, և յանուն Մօրն ամենայնի, և յանուն Քրիստոսի:

ՂԳ· Փռի(ւ)գացիք՝ մի անձն ասեն զաստուած և զգ· անուն:

ՂԴ· Արաբիանոսք՝ զՀոգին մեռանել ասեն զկնի մարմնոյն:

ՂԵ· Լամբատիանոսք՝ զաքեմաւորացն պոռնկութիւնն կատարեալ բարի ասեն:

ՂԶ· Գաւիանոսք՝ ասեն զՀոգիս մարդկան, թէ ցանկութեամբ շրջելով ի մարմինս իջանեն:

ՂԷ· Ադամանգելիտք, որք ասեն աւետաւոր հրեշտակն մարմնացաւ ի կուսէն և պաշտեն զնա: Եւ զեկեղեցիս, և զնշխարս սրբոց, և զքահանայս արհամարհեն: Եւ զդաւս, և զվարուձս, զոր աստուած պարգևեաց մարդկան վասն թողութեան մեղաց, զայն ի դիւաց ասեն: Եւ զցաւս, և զհիւանդութիւնս փոխոխելիս համարին, և փախչին ի հիւանդաց, որ է մեծ չար և սկիզբն ուրացութեան աստուծոյ: Ազգս և զգեղս հատանեն յանուն դիւաց և հրեշտակաց գրելով զանուանս նոցա: 1)

ՂԸ· Սաբէլ Լիբացին՝ շփոթէ զգ· անձինս և մի ասէ՝ զգ· անուամբ:

ՂԹ· Սոփրոնիոս՝ զՀանն ազգմամբ ասէ բնակեալ ի կոյան:

Ճ· Մանի՝ զբ· նիւթս և զբ· բնութիւնս ասէ:

ՃԱ· Վաղենտիանացիքն՝ զլ· իշխանութիւնս և զլ· երկինս ասեն:

---

1) Ձ· «յանուն դիւաց, և հրեշտակաց գրելով զանուանս նոցա»:

ՃԲ· Մարկիոնացիքն՝ ·Գ· հակառակ էութիւնս դնեն և տհաճ են ընդ արարածս։

ՃԳ· Թէոդորիտոս՝ ·Բ· երեսս առեղծանէ ի Քրիստոս և նզովակից առնէ զմարդն Բանին առտուծոյ։

ՃԴ· Պորփիւր՝ բազում հայհոյութիւնս հնչեաց յարարչութիւնն, զոր առակալի է ասելն։

ՃԵ· Եւսեբեայ՝ խոտեայ զամուսնութիւն և զվիս ուսեալն։

ՃԶ· Եւտիքէս՝ զմարմինն յերկնից ասաց բերեալ։

ՃԷ· Մարկեղոս՝ աղդումն ասաց զբանն ի մարմնի, և ոչ էութեամբ աստուած։

ՃԸ· Կեղեստիանոսք՝ զծնունդն և զչարչարանքն առակ մարգոյն ասեն, վասնորոյ անխոհեր հաղորդին։

ՃԹ· Մոնդայիք՝ զկենդանագիր պատկերն Քրիստոսի ոչ ընդունին։

ՃԺ· Ատրոմէս՝ ·Գ· երկին ասաց և ·Գ· իշխանութիւնս։

ՃԺԱ· Մարկեղ Գալատացի՝ զմարմինն Քրիստոսի յերկրի թաղեալ ասէ տակաւին։

ՃԺԲ· Դէորգէոս փղաւագրոս՝ յաւելուած Արիոսի։

ՃԺԳ· Մաքսենտէս և Գայինէ և Ուրսակէս և Վաղէնտէս՝ զնոյն ասացին՝ զԱրիոսին։

ՃԺԴ· Ելկեսացիքն՝ ասեն թէ ոչինչ է օգուտ յանուն մեռելոյն պատարագ և աղօթք և ողորմութիւն ի կենդանեաց, որք մեղաք գնացին։

ՃԺԵ· Բարդեծան՝ ասաց թէ մարմնոյն Ադամայ ի հող դառնալն, զի արարածն անցական է։

ՃԺԶ· Բերիղդեղոս· ասաց պիղծն, թէ Քրիստոս յառաջքան զմարդանալն չէր անձամբ և գոյութեամբ, և ոչ իւր սեպհական [1]) աստուածութիւնն, այլ հօրն է և ի նմա բընակեաց [2]) կամաւ հօրն։

ՃԺԷ· Ելէոս՝ ասաց զՀոգին մահկանացու։

---

1) Հ. Սեփհական.

2) Հ. բնակեց.

ձԺԸ Հելեսացիք՝ խոսեն զամենայն գրոց բանս, և ունին գիրս, և ասեն զնա ի յերկինից անկեալ: Եւ ասեն, թէ որ հաւատայ յայս գիրս՝ թողութիւն գոյանէ այն մեղացն, զոր ասաց Քրիստոս, թէ ոչ ունի թողութիւն: Սոքա թողուն և յերկինս հանեն հակառակ առաքելոյն Պօղոսի:

ձԺԹ. Որպէս՝ օրինապրեաց ոգուն ոչ ուսել, զի զՆօր սերմ՝ ասէ, ուսէ այնպիսին:

ձԻ. Սափէս ասաց՝ հակառակ ինչ ոչ գոյ:

ձԻԱ. Եպիկուրոս՝ զաշխարհս անեղ ասաց:

ձԻԲ. Արիստոտէլ՝ զնախախնամութիւն մինչև յարեգակն և ի լուսինն և յաստեղս ասաց, և անտի 1) ի խոնարհ՝ արուեստաստանաց և արուեստաստանից, և զՆոգիս մարդկան մահկանացու ասաց:

ձԻԳ. Ձեմականքն ոչ համարին զոք արժանի խօսելոյ՝ անեալք յամբարտաւանութեան:

ձԻԴ. Շնականքն, որով հնազարթ էին:

ձԻԵ. Հեթանոսականք՝ զոմանս ի դիւաց չար և զկէս բարի անուանէին, և կոչեն զնոսա Անդրապինէս:

ձԻԶ. Պիհռոնացիք՝ ասացին ամենայն ինչ ընդդիմակ ունի:

ձԻԷ. Փեքսևս՝ ընդդիմակս արար ընդդէմ ճշմարտութեանն:

ձԻԸ. Քրիսպոս՝ այնմ լուծմանս արար:

ձԻԹ. Հիմենէս և Փիլիտէս՝ ասացին թէ յարութիւն արդէն եղեալ է:

ձԼ. Բորբիոսք, որ ասին Տրմայինք, զամենայն մեզս անխտիր գործեն:

ձԼԱ. Աղօթականք՝ ասեն թէ ոչ կարէ մկրտութիւն զմեզս սրբել առանց աղօթից:

ձԼԲ. Մարկիանացիք. կանայքն մկրտութիւն առնեն, և յարութիւն ոչ ասեն:

ձԼԳ. Մոնտանոս վռիւգացի՝ զինքն ասաց Հոգին սուրբ և կանամբք շրջէր պղծոյք:

---

1) Ձ. «անդի»:

ձԼԴ· Սաղաքատինոսք՝ զամուսնութիւնն պոռնկութիւն ասեն և կանանց յարութիւն ոչ խոստովանին։

ձԼԵ· Նաւատիանոս Հռոմայեցին· զապաշխարութիւն ոչ ընդունին, որք ի հալածանան գլորեցան։

ձԼԶ· Բասիլիդէս ասէ, թէ Քրիստոս եկն բնակեցաւ ի Յիսուս։

ձԼԷ· Կերինթացիք· Կերինթոս աշխարհաւ եգիպտացի և աղգաւ սառակինոս։ Սա բազում գրեննովք եկն ի կոլմանս ասորոյ՝ բնակեցաւ առ կինոջ միում։ Սա ելեալ ի տանից կոչէր զօդային գևան յօգնականութիւն և ի բարկութենէն աստուծոյ անկեալ ի տանեացն սատակեցաւ։ Եւ առեալ կինն զինչան՝ գնեաց մանուկ մի Մանի անուն և ետ յուսումն փիլիսոփայութեան։ Եւ եղև այր խօսող և գրեաց սա աւետարանն և գոչեաց Թոմ(մ)այի, և ասաց վասն Քրիստոսի, թէ միաս և Հոգի ոչ ունէր։ Եւ ·Ե· սկզբունս ասաց՝ ¹) Նիւթ և խաւար, և աստուած՝ ասէ, առանց նիւթոյ չկարէր ինչ առնել։

ձԼԸ· Սատեռնելիոս՝ խոստեաց զամուսնութիւն և բամբասէ զարարիչն արուի և իգի։

ձԼԹ· Ուրսակէս և Վաղենտէս և Գայիոն՝ արարած ասեն զօրդին աստուծոյ՝ յետ ժամանակի։

ձԽ· Միւս կերինթոս ասէ՝ Յիսուս ի Մարիամայ (և) Յովսեփայ ծնեալ ըստ կարգի ամենայն մարդկան, և զմարմինն ապականացաւ, և Քրիստոս ի վերուստ եկեալ բնակեցաւ ի Յիսուսն։ Եւ զարքայութիւն մարմնապէս խոստովանին ի վերայ երկրի, և ամուսնութիւն յետ յարութեանն։

ձԽԱ· Սկէբտանոս և Թէոդիտոս և Աբտեմիոս և Մարկելոս՝ սոսկ մարդ ասացին զՔրիստոս։

ձԽԲ· Թէոդոսիանոսք· Թէոդոս ումն եպիսկոպոս յեգիպտոս Հանդերձ բազում եպիսկոպոսօք սկսաւ թիւրել զկրօնս եկեղեցւոյ և ուրանալ զյարութիւն մեռելոց։ Իսկ Թէոդոսի թուգաւորին աղօթիւք՝ յարեան ·Ի· մանկունքն յերկնից, և յամօթ եղեն։

---

¹) 2· «արաց»։

ձԽԹ. Ափիսացիքն՝ զաղիրա բարբառին, զոր և ասել ազաեղի է։

ձԽԹ. Մծղնէացւոց ազանդն ի պիծագորականացն բուսաւ և զօրացաւ։ Երթեալ բանակեցան առ Պիսիդեաւ, և զոր ինչ գործեն գարշելի է խօսել մեզ։ Եւ անունք ազանդոցն անուանեն Դունգուշեանք, Սղեհանք, Արեգակնօզ 1) բանչարակելք։

ձԽԵ. Դիոդոր՝ տարսոնեաց եպիսկոպոս, մարդ սուկ ասաց զծնեալն ի Մարիամայ մինչև ի մկրտութիւնն։ Եւ յիշանել Հոգւոյն՝ շնորհօք արժանացաւ որպէս աստուածոյ կոչիլ։ Եւ թշնամանս համարեալ է զեսայն Ցեսուն, որով վրկեցաքն։

ձԽԶ. Թէոդորոս Մանուեստացի՝ աշակերտ Դիոդորայ, ասաց սուկ մարդ զծնեալն ի Մարիամայ, և զի յաղթող եղև ամենայն ախտից և ճգնեցաւ՝ պատուեցաւ քան զարարածս և արժանացաւ լինել տաճար բանին աստուածոյ։

ձԽԷ. Նեստոր պիղծ՝ անտիոքացի, աշակերտ Թէոդորայ Մանուեստացւոյ, ոչ ասէ ծնեալ զաստուածն բանն ի Մարիամայ և ոչ ասէ զնա աստուածածին, այլ մարդածին։

ձԽԸ. Թէոդորիտոս՝ եպիսկոպոս կիւրիս քաղաքի, աշակերտ Նեստորի։ Ասէ՝ թէ աստուած ոչ եղև մարմին, այլ յարգանդի կուսին բնակեցաւ. առընթեր գոլով մարմին էառեղծ և յետ ծննանելոյն միացաւ աստուած բանն, և բնութիւնքն յատկապէս մնացին։ Եւ սուկ մարդ ասէ չարչարեալ, զոր և պատուղ մարդկային բնութեանս ասէր։

ձԽԹ. Լևոն, Հռոմայ Հայրապետն, տուն ասաց շինեալ առ ի Մարիամայ ծնեալ մարմինն, և ·Բ· բնութիւն ասէ, և սուկ մարդ չարչարեալ ասէ։

ձԾ. Քաղկեդոնի ժողովն զԼևոնի . . . . . ·Բ· բնութիւնս անխառնելիս ասացեալ ի Քրիստոս։

ձԾԱ. Մարաքինոս՝ Հռոմայ պապ, ·Բ· կամն և ·Բ· ներգործութիւնըս յաւել ի Քրիստոս (ասէ) 2)։

---

1) Ձ. «Արգկնօզ»։

2) Այս «ասէն աւելորդ է։

ՃԾԲ· Մաքսիմոս՝ մինակեց շնկեց, զնոյն խոստովանեաց։

ՃԾԳ· Քաղերթական, որ է արիւնարբուաց· Թագաւոր ոմն յունաց աշխարհէն պատահեաց պիղծ աղանդին Պոլիկեոնաց և ոչ կարաց դարձուցանել զնոսա յաղանդէն իւրեանց· Հալածեաց զնոսա անդր քան զլեառն Կոմկաս։ Եւ կին մի առաջնորդէր նոցա՝ Մարէ անուն, կախարդ և կուռդ։ Զարագործացն բարի առնէր և բարեգործացն՝ պատուհաս, և զկանայս հասարակաց ուսուցանէր, և աւուրս ·Ե· որոշե(ա)լ— զոր մեք հասարակաց կոչեմք—զոյն սատանայականս անուանէր, և ի նոսա հեղուլ արիւն մարդոյ բարի ասէր, և որ ուտէ և ըմպէ զարիւն մարդոյ՝ այն արդարութիւն։ Եւ յաղթմանէ սատանայի տեսիլ տեսանէր և մանկունս փողոտէր և ասէր, թէ նոցա հոգիքն գան ի տեսիլ կախարդաց։

ՃԾԴ· Ապա կին մի՝ Շէթի անուն, այնր աղանդոյն, ելեալ զկնի Թուրքայն եկն ի Հայս, և Պօղ ոմն յԱրարատեայ գաւառէն, որ աշակերտեալ էր սրբոյն Եփրեմի, առևանկեաց զկինն, և խառնակեցաւ աղանդն ընդ քրիստոնէութիւնս։ Զարեգակն Քրիստոս ասէին՝ ոչ մեռեալ և ոչ յարուցեալ· և վասն այնորիկ ծոմանան ի կիրակէի։ Եւ եկեալ աւուրն Եփրեմ՝ ոչ կարաց քակել զնա յաղանդոյն և անէծ զնա և գնաց։

ՃԾԵ· Կոմմականք, այսինքն խոստոեալք· սոքա խաբեալք ի սուտ մարգարէից հաւատան և սուտ առաքելոցն և սուտ վարդապետաց, և պաշտեն զստութեան հոգին։ Զքաղմութեան վկայից սաղմոս[1]) ոչ ընդունին և ասեն թէ նոքա ոչ կարեն բարեխօսել առ աստուած վասն մարդկան։

ՃԾԶ· Ազօրականք, այսինքն քաղցրականք՝ սոքա զԱննա՝ զԱստուածածնի զմայրն և զեղիսաբեթ ի հոգւոյն սրբոյ ասեն յղացեալ։

ՃԾԷ· Եւտիքէս՝ վախուցեալ յերկուց բնութեանցն՝ զտէրու-

---

1) Ձ. «սղս»։ Թերևս՝ «ազս»=ազօթս։

նական մարմինն ոչ ի մեր բնութենէս ասաց և ոչինչ առեալ ի Մարիամայ, այլ որպէս կամեցաւ՝ ասէ, և ուստի կամեցաւ ըստ աստուածային կարողութեանն, բայց ծնաւ՝ ասէ, ի Մարիմայ [1]), այլ ոչ ի Մարիամայ։

ՃՐԸ. *Իսկ Յուլիոս առաւել վախչելով ի քաղկեդոնականացն՝ գայթակղեցաւ, զի ասաց եթէ մարմինն Քրիստոսի փոխեցաւ և եղև ի միաւորութեանն, որ յաստուածութեանն, որպէս զբանն բնութեամբ, և թէ՝ ոչ է արարած, և ոչ չարչարելի, և ոչ բանականակելի, և ոչ մահկանացու, և թէ՝ երեւումն առաչօք էր։ Եւ ամենք յաշակերտաց նորա որպէս թէ ի նմանէ ուսեալք ասեն, թէ յորժամ պատէր խան. ձարրօք ի մորին՝ նոյն մարմինն յաճոռ փառաց էր, և յորժամէր ի բաղկաց ծերունոյն, նոյնպէս ազգաձև յաճոռ փառաց Հանգչէր։ Նոյնպէս ասեն և ամենայն ուրեք, և ասեն թէ որ ինչ յօրէնսն գրեալ է վասն քաղցի և ծարաւոյ, և վաստակի, և ննջելոյ, ոչ վերաբերի ի մարդկութիւնն, այլ յաստուածութիւնն։ Եւ աստուածութիւնն բնակաւ զայն ամենայն կամաւորութեամբ, զի կամքն՝ որ ի Քրիստոս, աստուածային էր։ Վասն այսորիկ Յուլիոս երկրորդ Մանի անուանեցաւ։*

Ա՛յլ մեք ընդ ճշմարտութիւնն գնալով, փառաւորեսցուք զՔրիստոս աստուած, յաւիտեանս ամէն։

Վ Ե Ր Ջ։

---

2) Ձ. «ի մարիմ»։